

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրային դիմում են ուղղակի
Tiflis. Redakcia «Masak»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ դա բարոյական է:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ Ղլարից: Ներքին լուրեր:—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Եղիպատոս Աւարո-Ունդա-
բիւ: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—
ՀՆՈՒԱՅԻՐՆԵՐ:—ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Հարս և բ-
կեսուր:

ՄԻԹԵ ԴԱ ԲԱՐՈՅԱԿԱՆ Է

Մի մարդ մի այլ մարդուն փող է պարտ,
առանց թղթի, առանց ստորագրութեան,
ազնիւ խօսքով,—և յանկարծ այդ մարդը
ուրանում է իր պարտքը, ասում է թէ ոչինչ
պարտ չէ: Այդ ամենը անբարոյական են
համարում:

Բայց երբ մի մարդ խօսքով յայտնում է
մի այլ մարդուն թէ համաձայն է նրա դա-
շափարի, նրա մտքերի հետ, ցոյց է տալիս
թէ համախոհ է նրա ուղղութեան հետ,—
և յանկարծ նոյն մարդը լրագրութեան մէջ
յայտնում է հակառակ մտքեր, ուրանում է
իր ասածները... այդ մեր հասարակու-
թիւնը անբարոյական չէ համարում:

Բայց մեր կարծիքով ուրանալ իր տուած
խօսքը մի գաղափարի մասին, նոյնքան ան-
բարոյական է, որքան ուրանալ իր տուած
խօսքը դրամական մի պարտքի մասին:

Եւ ահա այս տեսակ մի հասարակու-
թիւն, որի մէջ դեռ եւ տիրում է այդ աս-
տիճան անբարոյականութիւն և նենգու-
թիւն, այդ տեսակ հասարակութիւն իրան
ընդունակ և հասունացած է համարում
հասարակական ամեն զործունէութեան հա-
մար:

Մի մարդ, որ մի տեսակ խօսում է և այլ
կերպ գրում, մի մարդ որ խօսակցութեան
մէջ ձեզ հետ համաձայնութիւն է, իսկ մի քա-
նի օրից յետոյ լրագրի մէջ իր յայտնած
համաձայնութեանը, իր տուած խօսքի

հակառակ է գրում, մի մարդ որ ուրա-
նում է իր խօսքը, որ ինչպէս Թիֆլիսի բար-
բառով ասում են հաշա է ուտում, այդ
տեսակ մարդ կարող է միթէ ընդունակ
լինել հասարակական զործունէութեան...

Ներակայեցէ՛ք ձեզ որ այդ տեսակ անբա-
րոյական և նենգաւոր հասարակութեան
մէջ մարդիկ հաւաքվում են այս կամ այն
խնդրի վրա համաձայնելու մի ժողովի
կայանալի նիստից առաջ: Ձեզ հետ համա-
ձայնվում են, ձեզ խօսք են տալիս ձեր ա-
ռաջարկութեան համար քուէ զցելու,—
իսկ երբ որ գալիս է ժողովի օրը, դուք
յանկարծ տեսնում էք թէ նոյն անձինք,
որոնք ձեզ ազնիւ խօսք են տուել ձեր միա-
քը պաշտպանելու, ձեզ հետ միասին քուէ-
արկելու, նոյն անձինք, ասում ենք, կոտրե-
լով իրանց տուած խօսքը, ձեզ դէմ են քուէ-
արկում:

Այդ տեսակ նենգաւոր և խաբեբայ վար-
մունքը մենք ամեն օր տեսնում ենք մեր
մամուլի, մեր հասարակութեան մէջ: Այդ
տեսակ, վերին աստիճանի անբարոյական
հասարակութիւն դեռ իրաւունք չունի իրան
հասունացած համարել հասարակական
կեանքի, հասարակական որ և է զործունէ-
ութեան համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻՑ

Ապրիլի 8-ին

Մեր քաղաքի 9000 բնակիչներից ահա երեք տա-
րի է, որ տարին 500 մարդ է մեռնում, իսկ ծնվում
է 200 երեխայ. ուրեմն իւրաքանչիւր տարի պա-
կասում է ժողովրդից 300 մարդ: Եթէ այսպիսի
բան ուրիշ տեղ պատահէր, անպատճառ մեծ դը-
ղերաց կընկնէր, կը հետեւին վերջ դնել այդ

զարհուրելի դրութեանը. իսկ մեզանում դրա-
վա նայում են, ինչպէս մի սովորական բանի
վրա: Եթէ հարցնէք ժողովրդից, նա ասում է որ
մի ակարբութիւն կայ. բայց ինչ է, նա չէ հասկա-
նում. իսկ բժիշկները ասում են, որ տենդի հե-
տեանքն է, որովհետեւ բոլոր քաղաքը չըջաղատած
է ճանիճներով: Բայց ժողովուրդը ասում է, որ
այդ ճանիճները առաջ աւելի շատ էին, բայց
այդքան ակարբութիւն և մահ չը կար: Այս-
պէս թէ բժիշկները, և թէ ժողովուրդը իրանց
վերջին խօսքն տալով, հանգստանում են: Եդ-
բարեկեր, կարելի է անտարբեր լինել, բայց ան-
տարբեր լինել այստեղ, և մեռնել ոչխարի պէս
սպասելով իր հերթին, դա մի անհեթեղ յանցանք
է: Եւ ինչպե՞ս է ձեր աշխատանքը, որ օրվայ համար
է ձեր հարստութիւնը. քննեցէ՛ք այս ակարբութիւնը
և դուք որքան պատճառք և եթէ ճշմարիտ ճանիճ-
ներն են, հարց դուք ոչնչացնել նրանց. դրա
համար բաւական կը լինի միայն մեղմացնել ձեր
չապկութիւնը. թող ամեն մէկը զրկէ իրան ա-
մենակարեւոր բաներից և դո՛ւք այս դրծի համար:
Ես կարծում եմ որ կեանքը ամենից թանկ է:
Միթէ ան զղարկել համարված են, որ նրանք
այնքան անհարկաւոր էակներ են, որ ճանձնի նման
կոտորվին: Եղբայրներ, ամաչե՛ք, մենք տալիս
է ինչեքորդ դարումն ենք ապրում: Իսկ մեր բժիշկ-
ներին ամեն կասկե՛ք, որ շատ մեծ յանցանք են
զործում, ծածկելով գործի էութիւնը: Մեր կար-
ծիքով, դա մի վարակիչ տկարութիւն է, որի հետ
միշտ կից է լինում և տենդը, ինչպէս տեղական
տկարութիւն: Մեր բժիշկները միշտ կրկնում են
թէ այս սարսափելի մահերը տենդի հետեանք-
ներն են, բայց մենք ներդրութիւն ենք խնդրում
նրանցից, որ մասնագէտ չը լինելով կասկածում
ենք, որ դա տենդի գործն է. մի կամ երկու
օրում տենդը դժուար թէ կարող է սպանել մարդու:
Առաջ աւելի շատ տենդ կար, բայց մահը այս-
քան չէր: Կը խնդրէ՛ք մեր Ղլարի բժիշկներին,
որոնցից մի քանիսը հայեր են, որ ձեր պատուա-
կան լրագրի միջոցով բացատրէին այս տարա-
փելի մահերի պատճառները, որը շատով կամա-
յայնէ մեր հայաբնակ քաղաքներից մէկը: Գուցէ
կը գտնվին մարդասէր անձինք, որոնք մեզ պէս
անտարբեր չեն լինի դէպի մեր կեանքը և մի
բանով կօշկեն մեզ:

ԿԻԼԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են: «Հաստատ աղ-
բիւրից տեղեկացանք որ Լազարեան ձեռնարանի
վերաբնուէ պ. Քանանեան, թարգմանում է Շէկս-
պիրի «Օտէլլո» դրաման:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ Գ. Ն. Տէր-Գեորգեան խնդ-
րում է մեզ տղել հետեւեալը: «Շնորհակալութիւն
յայտնելով պ. պ. Բաթիշին, Յ. Հախաթուրյանին,
Տ. Նաղարեանին, Լ. Տիրանեանին և այլոց, ո-
րոնք իրենց հեղինակութիւնները և հրատարակու-
թիւնները ուղարկել են Մոսկովայի հայ ուսանո-
ղական գրադարանի համար, խնդրում ենք այն
պարտնելին, որոնք կը կամենան դարձեալ նոյն
նպատակով նուրից գրքեր, այսուհետև ուղարկել
հետեւալ հասցեով. ВЪ Москву, въ Универси-
тетъ, студ. Х. Хачатурову.»

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ որ այս տարի այդ-
տեղ բացվել է Գիմնազիայի հինգերորդ դասարան
և Ուսուցչական սեմինարիա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Բերլինից ստացված լրագրիները շատ ան-
համապատասխան լուրեր հաղորդեցին Եգիպ-
տոսի վերաբերութեամբ, գրում է «Го-
лосъ» լրագիրը: «Nat. Zeitg.» լրագիրը
պնդում է, թէ Բ. Գուսը յանձնել է իր
ներկայացուցիչներին օտար պետութիւնների
մօտ մասնաւոր լինել կեդրոնական այժ-
մեան խնդրով Տեղեկափաշային գահընկեց
անելու անհրաժեշտութեան վրա և մի և
նոյն ժամանակ յայտնել որ առկա յար-
մար է համարում Եգիպտոսի դահաժառանգ-
ութիւնը մահաբաժան օրէնքի ենթարկել:
Պաշտօնական «Nord. Deut. Allg. Zeitg.»
լրագիրը, խօսելով եգիպտական գործերի
մասին, յայտնում է, թէ անհրաժեշտ է Ե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԱՐԼՍ ԴԻԿԿԷՆՍ

ՀԱՐՍ ԵՒ ՍԿԵՍՈՐԻ

Տան մուտքի մօտ նրանք հանդիպեցան միտ
Վ. օգանին: Ջերալդինան դիմել, որ Վ. օգանը կա-
նուխ գալու էր իր և Հէնրիի հետ զբօսնելու հա-
մար: Նրա գալը և Հէնրիի ներկայութիւնը, որ
տանից դուրս էր եկել միտ Վ. օգանին ձիուց ցած
իջնելու, աւելի քան դէպքին յարմար էր:

—Գուր դեռ պատրաստ չէ՞ք, ասաց միտ Վ. օ-
գանը Ջերալդինային տեսնելով: Ա՛հ, միտա՛ր Ամ-
ֆիլէտ. այդ երբ էք եկել:

—Այո՛ր առաւօտան, դաւանութեամբ պատաս-
խանեց Արտուրը: Նրա ալիւլուած կերպարանը
և ձայնի օտարութիւնը երեւելով Ջերալդինային միտ Վ. օ-
գանին: Սա հարցաշար կերպիւ մօտեցրեց դիտա-
կը աչքերին և հանգիստ դիտեց թէ նրան և թէ
Ջերալդինային:

—Ա՛հ... ընտանեկան հոգեւոր, արտասանեց նա,
երեւի ես խանգարեցի:

—Ո՛չ, խնդրեմ, միտ Վ. օգան, արագ մէջ մտաւ
Ջերալդինան. ձեր ներկայութիւնը անհրաժեշտ է,
Հէնրի, դուք եւ մեզ հետ կը գաք:

Միտ Վ. օգանը մեզմով բարձրացրեց յօնքերը և
զուտը խնայեց:

Հէնրի մէջքը ուղղեց, բերները հարկեց, ժպտաց
և արտաբերեց. շատ ուրախ եմ: Բայց նրա ձայնը
սովորականին պէս ինքնախօսած ու ուրախ չէր
հնչում:

Նրանք չորսը միասին ուղևորուեցան դէպի
գրատունը, որ առաւօտանը միշտ լինում էր
միտարի Ամֆիլէտը: Տեսնելով այս օտարութիւն ու-
ղևորութիւնը, միտարի Ամֆիլէտը իսկոյն հասկա-
ցաւ բանի էութիւնը: Նրա դժգոյն դէպքը համա-
րեալ թէ քաղաքացի, արտայայտելով խտրութիւն և
անդիմութիւն, միայն նրա սե աչքերը փայլեցան
չարագուշակ կրակով: Բայց այս անգամ Ջերալդի-
նան չը չփութուեց նրա այդ հայացքից և առաջի-
նը մօտեցաւ. սեղանին, որի մօտ նստած էր իր
սկեսուրը: Միտարի Ամֆիլէտը այդ րոպէին զգաց,
որ իշխանութիւնը դուրս էր սլքվում իր ձեռքից:

—Այդ ինչ է նշանակում, հարցրեց նա. ինչ
ծիծաղելի դէպք ունէ՞ք դուք այսօր: Գուր դոնէ
բացատրեցէ՛ք ինձ այս կատակերգութիւնը, ասաց
նա, դիմելով միտ Վ. օգանին:

—Ma foi, non, ես ինքս չեմ իմանում, պա-
տասխանեց միտ Վ. օգանը, հետաքրքրվով իր ամա-
ղանկայի երկար փնէրը և հանգիստ փայլելու-
թեամբ նստելով դահաժառանգի վրա: Նա վերջրեց
դիտակը և սկսեց դնել նրանց, կարծես, մի հան-
դիսական լինել, որ ուշիւշով հետեւում է դերա-
սանների խաղին:

—Այս ինչ է նշանակում, սկսեց Ջերալդինան
ոչ երկխոսութիւնից, այլ վրդովմունքից առաջա-
ցած զրգրովն ձայնով. ամուսնու մօտ գրած

նամակների մէջ դուք իմ մասին այնպիսի լուրեր
էք հաղորդել, որ ես ստիպուած եմ ձեզանից բա-
ցատրութիւն պահանջել այն անձինքների ներկա-
յութեամբ, որոնց վրա դուք իբրեւ վերաներ և դա-
տաւորների վրա եմ ամբարկում:

—Ո՛հ, Տէր իմ Աստուած: Արտուր, ինչպէս ես
թող տալիս դու այս հասարակ կնոջ խառնել քեզ,
ջշտեմքին, այսպիսի մի անարգ բանի մէջ,
բարկութեամբ ասաց միտարի Ամֆիլէտը: Բայց,
աւելացրեց նա կիսաձայն կարծես ինքն իրան,
ուրիշ ինչ կարելի է սպասել մի ցած, մի անկիրթ
աղջկանից: Այսպիսի մի բան կարող է միմյան
այդպիսին անել:

—Այստեղ խօսքը ոչ թէ ուսման, այլ
արդարութեան և ճշմարտութեան վրա է, միտարի
Ամֆիլէտին ընդհատեց Ջերալդինան: Ես պէտք է
խօսեմ, շարունակեց նա և նրա ձայնի մէջ այսօր
առաջին անգամ բուռնացան հրամայական երեւոյթ-
ւեւ կատարելով իրաւունք ունեւ խօսելու և դուք
չէք կարող ինձ լռեցնել:

—Այդ քեզ բնութեան զարմանալի երևոյթ. աղ-
ջիկ խօսք եմ տալիս ձեզ, որ ես երբեք այսպիսի
բան տեսած չեմ, հեղինակն ասաց միտարի Ամֆ-
իլէտը: Նա ուշիւշով նայում էր Ջերալդինայի վը-
րա, բայց նրա հայացքը հարսին չփութելու ըն-
դունակութիւնը արդէն կորցրել էր:

Ինչպէս առհասարակ լինում է երկչու բնաւ-
ութիւնների հետ, վերին աստիճանի կատաղու-
թեան հասցրած Ջերալդինային չէր կարելի ոչ
կանխատեսել և ոչ վախճանել: Միտարի Ամֆիլէտը

ստիպուած էր խոստանալ այս անյաղժ ոյժի ա-
ռաջ, որ դարձել էր հարսի մէջ, և նա լռեց:

—Այս նամակները դուք էք գրել, շարունակեց
Ջերալդինան, ցոյց տալով ծրար, որ նա բռնած
ունէր ձեռքում. և, որովհետեւ դուք ամբարկում
էք միտ Վ. օգանի և Հէնրիի վրա, ես կը խնդրեմ
սրանց ուղղել ձեր անձաւորութիւնը և պատմել, թէ
ինչպէս է իրօք բոլորը կատարվել:

—Միտ Վ. օգան, արդե՞ք դուք որ և իցէ նկա-
տողութիւն արել էք ինձ երբ և իցէ Հէնրիի հետ
ընտանեւոր վարմունքիս համար:

Եւ նա կարգաց նամակի այն տեղը, ուր նկա-
րագրած էր թէ Ջերալդինայի վարմունքը ինչպէս
էր զարմացրել միտ Վ. օգանին և թէ ինչպէս այս
վերջինը ամենահամարձակ հայացք էր ձգել Ձէ
բաղինայի վրա:

—Կարծեմ, ո՛չ, ծանր արտաբերեց նա, աչքից
ցած բերելով դիտակը և իր երկար ձեռնոցները
հանելով: Ես չեմ յիշում, որ ես ձեզ հետ դրա
մասին խօսած լինեմ, բայց ես ասել եմ միտարի
Ամֆիլէտին, որ ձեզ, իմ կարծիքով, չէք վայելի
այնչպիսի յաճախ և այնքան հեռու զբօսնելու ե-
թալ կապիտան Աստիլիի հետ երկուսով մի-
այնակ: Ես պէտք է ձեզ խոստովանուեմ, որ
եւ դիտմամբ ամեն անգամ գալիս էի ձեզ հետ
զբօսնելու, որ ոչ ոք առիթ չունենար բամբասե-
լու: Ես ներողամիտ էի դէպի ձեզ, եւնիպրոքով,
որ ձեզ անցյալ են թէ բարձր չըջանը և թէ նրա
սովորութիւնները, բայց միտարի Ամֆիլէտի ան-
տարբերութիւնը դէպի հասարակական կարծիքը

գիտութիւն մէջ մի ամուր կառավարութիւն հաստատել, որ կարողանայ երկաթէ ձեռքով ճնշել ամեն տեսակ փորձեր մամուլիւններին տիրապետութեան ժամանակներին վերադառնալու համար:

Հետաքրքիր է իմանալ, թէ Բերլինի պաշտօնական լրագրի յայտնութիւնը մինչև որ աստիճան կապ ունի Բ. Կրան ցանկութեան հետ այժմեան խեղդիկին գահընկեց անելու մասին և «Nord. Deut. Allg. Zeitung» լրագրին մտքեր ներշնչողները արդեօք համոզված են, որ միայն Տեղեկական-Փաշայի յաջորդը կարող է ազատել Նեղիկափոսը մամուլիւնների տիրապետութենից:

Այդ հարցի բացատրութիւնը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ, եթէ Բերլինի մէջ օգտակար համարելին գահընկեց անել այժմեան խեղդիկին և նրա տեղը Բ. Կրան ցոյց տուած մի իշխանի նշանակելը այդ հանգամանքը կապացուցաներ, որ գերմանական քաղաքագետներին հայեացքները եղիպտական գործերի մասին արմատականապէս հակառակ են միւս պետութիւնների, մանաւանդ Անգլիայի և Ֆրանսիայի հայեացքներին: Բ. Կրան կողմից Տեղեկական-Փաշային գահընկեց անելը և եղիպտական գահաժառանգութիւնը մահմետական օրէնքին ենթարկելը այնպիսի հետեւեղներ կունենայ, որոնք Սուէզի ջրանցքի Թուրքիայի ձեռքը անցնելը իրանց համար փնտաւար համարող պետութիւնների համար ցանկալի չեն կարող լինել: Նոր խեղդիկ Թուրքիայի մի գլխաւոր նահանգապետի դեր կը խաղայ և կը մնայ եղիպտական գահի վրա միայն թիւրքաց զօրքերի օգնութեամբ: Գործերի այդպիսի դրութիւնը առհասարակ եւրոպայի համար և մանաւանդ Ֆրանսիայի և Անգլիայի համար աւելի փնտաւար է, քան թէ մամուլիւնների տիրապետութիւնը, որովհետեւ գործերի այդպիսի դրութիւնը եղիպտական գործերին Թուրքիայի ներքին գործերի բնաւորութիւն կը տար և անկարելի կը դարձնէր եւրոպայի միջամտութիւնը: Սուէզի ջրանցքը չէ կարող և չը պէտք է դառնայ Թուրքիայի ներքին ջրային ճանապարհի, մի նոր Բոսֆոր, որ միջոց է տալիս Բ. Կրանը սարսափելի հարուած հասցնել ամբողջ լուսաւորված աշխարհի ծովային առեւտրին:

Անկարելի է սուլթանին այնպիսի իրա-

ւունք տալ, որ նա իր կամքի համեմատ կարողանայ փոփոխել Նեղիկափոսի կառավարչներին: Այլ թէ սուլթանը, այլ ամբողջ եւրոպան և այն էլ առանց Բ. Կրան մասնակցութեան պէտք է վճռէ այն հարցը, թէ եղիպտական գահի վրա այժմեան խեղդիկը կարող է մնալ թէ ոչ: Եթէ Արաբի-փաշայի այժմեան միախառնութիւնը եղիպտական զօրքերի օգնութեամբ կամենում է վերականգնել Նեղիկափոսի մէջ մամուլիւնների տիրապետութիւնը, որ ոչ քիչ համար ցանկալի չէ, այդ բանին արգելք կը դնէ եւրոպական պետութիւնների միջամտութիւնը եղիպտական գործերին, ինչպէս նորեւրոս առաջարկեցին Անգլիան և Ֆրանսիան:

Եթէ ճշմարիտ Թուրքիայի ներկայացուցիչները վերջինչաւ առաջարկութիւնը կանեն պետութիւններին, անկասկած վերջիններին շատերը կը պատասխանեն, թէ Բ. Կրան բոլորովին իրաւունք չունի իր ցանկացած փոփոխութիւնները մտցնել Նեղիկափոսի մէջ:

ԱՌՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

„Köln. Zeit.“ լրագրի թղթակիցը հազորդում է հետեւեղը ապրիլի 20-ից: Աւստրիական միախառնութեան տուած բացատրութիւնները պատգամաւորների ժողովին Աւստրիայի քաղաքականութեան մասին Բոսնիայի և Հերցեգովինայի հարցի պատճառով ներկայումս միայն իրանց վրա մեծ ուշադրութիւն դարձրին: Այն հանգամանքը, որ կառավարութիւնը պարզութեամբ յայտնեց Աւստրիայի դիտաւորութիւնը այդ նահանգներին չը հրաժարվելու մասին, ոչքիչ էր կարող զարմացնել մանաւանդ այսպիսի մի ժամանակ, երբ ապստամբութեան ճնշելը նոր և ծանր գոհեր պահանջեց: Բայց կոմս Կալտիկ բացարձակ յայտնեց, որ աւստրիական կառավարութիւնը ներկայ լուսին յարմար չէ գտնում պետական-իրաւասական յարաբերութիւնները փոփոխելու համար, որոնց վրա պէտք է ազդեն և ուրիշ գործեր: Սեւալ են տարածված բոլոր լուրերը, իբր թէ աւստրիական կառավարութիւնը միւս պետութիւնների հետ բանակցութիւններ է սկսել Բոսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելու համար: Այնքան է, որ այդ բանակցութիւնները ձեռնուտ կը լինեն:

Ինձ զարմացում էր: Նա այս խօսքերը աւելացրեց մի այնպիսի եղանակով, որ խօսքը, կարծես, պատուած զբոսի կամ կտորած մտաւոր մասին լինէր: — Միտրիս Ամֆլէտ, բացականչեց Ջերալդին, դիմելով իր սկստուրին. դուք ինքներդ չէիք, որ յանդիմանեցիք ինձ նրա համար, որ ես չէի ուղղում համաձայնել ձեզ հետ ու գնալ դրօնելու: Հենցիկ հետ միջոցով երկուսով: Այդ դուք չէիք, որ աշխատում էիք մեզ իրար մօտեցնել: Ահա ձեզ ձեր սեպհական խօսքերը, ես նրանց յիշում եմ. դուք ասացիք, որ սա իմ ամենամօտիկ ազգականն է և որ ես սրան պէտք է սիրեմ, ինչպէս եղբորս:

— Է՛, մօրքոր Ամֆլէ. դուք այնքան պարզ խաղ խաղալիս չէք եղել, ասաց Հենրիկ իր ուրախ պարական ձայնով, որի լսելը կանանց, ջրային, բարեկամած ձայնի մէջ շատ անորոշելի էր:

— Արտուր, աւելացրեց նա, դիմեց ինձ հետ, միտս վազում կը մնայ ամուսնուր մօտ:

— Բայց ինչպէս կարողացաւ այդ պատահել, խօսեց նա, հենց որ նրանք զրան չէինք ոտը դառն դրնալ: Միթէ դու պարզապէս ես... հիմ, դու ինչպէս կարողացար հաւատալ այդպիսի ակներև բանաստեղծութիւն, հա: Ի հարկէ, ես շատ բարեկամացայ կնոջը հետ, բայց ինչու համար այսպիսի արմուկ պէտք է բարձրանար: Հենց իմ գալու առաջին օրը ես նկատեցի, որ նա բոլորովին ճշուած էր և ես ամենահանդիստ կերպի սկսեցի նրա կողմը պահել: Ես աշխատում էի ամեն կերպիւ բաւականութիւն

տալ նրան՝ քաջաբերելու և դէպի իր սրտը հաւատ դարձնելու: Համար: Բայց ես յուսով եմ, որ ինձ ոչ ոք այնչափ անգամ չէ համարում, որ կարողանայ օգուտ քաղել նրա անմեղութիւնից ու պարզասրտութիւնից և լինելով ձեր ազգականն ու ձեր տան մէջ հիւր, յանդիմանի անպատշաճ ձեր բնատուրը: Մարդ Ջերալդինային բարբառելով իմ խնամատարութեանը յանձնեց: Աղբիւր ևս մի փոքր զարմանում էի, բայց ես միտրիս Ամֆլէտին իշուր չէի ուսումնասիրում մի քանի տարուայ ընթացքում և ես չուսում հասկացայ նրա դիտաւորութիւնը: Միտրիս Ամֆլէտը ինձ հետ սովորականից դուրս քաղցր էր, թէ ևս գիտեմ, որ նա ինձ չէ սիրում: Զերալդինային նա միշտ շուրջը թուր էր, բայց ես տեսնում էի, որ նրան սրտանց ատում էր: Նրա հաշիւը պարզ էր, բայց նա տանալ տուեց իր խաղը: Զերալդինան մտքով անգամ չէ անցկացրել ինձ հանդիմանելու, իսկ ես երբեք ցանկութիւն չեմ ունեցել խորամանկութեանը նրան այստեղից փախցնելու:

Նա ծիծաղեց և ձեռքով հարկեց իր մաղերը, ինչպէս մի մարդ, որ լիովին ճանաչում է իր տները: Կարծես արժանաւորութիւնները: — Ես այն բոլորը, ինչ նա գրել է քեզ Ջերալդինային երկրորդական ներկայացումների մասին—կատարեալ արտօնութիւն է: Երբ դու այնչափ ուշադրի նստակց, կիսով աստիճակ արտօնեցաւ և իր աչքի առաջ կանգնացնում էր ամեն տեսակ սարսափներ, որ կարող էին քեզ հետ պատահել: Նա, յիշուր, անկեղծօրէն էր արտօնում քո մասին

նէին համայն սլավոնների համար, որոնք այդ դէպքում կը պահանջէին Բերլինի գահնադրի փոփոխութիւնը: Այդ հիման վրա արեւելեան գործերի խաղաղ զարգացման համար շատ օգտակար է, որ վերջին շեւալ լուրերը պաշտօնապէս հերքվեցան:

Ունգարական ազգային ժողովի մասնաժողովին ընդհանուր կայսերական ֆինանսների միւնիստր Սլավի հետեւեղ բացատրութիւնները տուեց Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբութեան ծագման մասին: Ամենից առաջ պէտք է 'ի նկատի առնել, որ անսանձ կեանքին սովոր ազգաբնակչութիւնը չէ կամենում ենթարկվել բարեկարգված կանոններին: Ապստամբութիւնը չէ պահանջում օտար պետութիւններից, այլ խրախուսվում է զանազան մասնաժողովների զբաղման օգնութեամբ և ազգաբնակչութիւններով: Ապստամբութեանը մասնակցեցին ոչ թէ միայն ուղղափառները և մահմետականները, այլ և կաթոլիկները: Գերված մահմետականները հաւատացնում էին, որ ապստամբութեան պատճառը ընդհանուր զինուորագրութեան մտցնելն էր Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ, մինչդեռ միւս գերիները այլ պատճառներ բերին, որոնք հիմնաւոր չեն:

Աւստրիական լայնատար թիւղթաւային մասնաժողովը ապրիլի 18-ին քննեց կառավարութեան պահանջած կրեդիտը ապստամբված նահանգները վերջնականապէս խաղաղեցնելու համար: Պատերազմական միւնիստրի մանրամասն բացատրութիւններից յետոյ Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ ըսկված ապստամբութիւնների և աւստրիական զօրքերի պատերազմական գործողութիւնների մասին, միւնիստրի յայտնութեանց յետոյ, թէ կառավարութիւնը իր հեղինակութիւնը պահպանելու համար պէտք է պիղծէ, որ յիշեալ նահանգների մէջ գործադրվի ընդհանուր զինուորագրութեան օրէնքը, եթէ մինչև անգամ շատ քիչ զինուորներ հաւաքվեն, մասնաժողովը միաձայն ընդունեց իրան արած առաջարկութիւնը:

ՆԱՄՈՒԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅՈՒՆ

Կ. Պոլիս, 8 ապրիլի 1882

Հայրական խնդիրը զինուորադր մը կրեց: Բ. Կրանը, որոյ քաղաքականութիւնն եղած է միշտ մեծ տեղութեանց մի քանին շահելով միւսներուն

և ոչ թէ կատակ անում, ինչպէս քեզ գրել է միտրիս Ամֆլէտը: Եւ միտս վազում էր նահանգում, որ նա անպիսի խաղաղ էր քո երկար լուսնեան պատճառով: Ես խոճացի ինչո՞ք կնոջը և սկսեցի նրան պաշտպանել. ահա երբ միտս վազում էր ինձ էլ մի լուսնաւոր:

Հենրիկ նորից ծիծաղեց:

— Հասկանալի է, որ նա, այսինքն Ջերալդինան մօտեցաւ ինձ և, մեկնելով ինձ իր ձեռքը, ասաց. «Հորոշակաւ եմ, ձեզանից, Հենրի, իմ բարեկամութեամբ: Այդքանը լցուել էին արտաւարական և սրճափ նա սիրուր էր ու արտօնում: Ես չէի կարողանալ զննել նրան և չէի հակառակ:

— Հենրի, ինչ իմար էի ես, ասաց Արտուրը: Հենրիկ լուրջ նայեց նրա վրա և չը հակառակ:

Արտուրը ամաչած պէտք է խառնուկներ իր սխալը: Նրա բնաւորութեանը հակառակ էր ներողութիւն խնդրել Ջերալդինային կամ արդարացի իրան նրա առաջը: Հանդիպելով նրան գահընկեցում, նա կարողացաւ միայն պիղծել զրկախառնել նրան և շնջալ:

— Իմ սիրելի, հաւատարմաւ, արդեօք կը ներեն ինձ:

Ջերալդինան զարձրեց դէպի նա իր երկրորդականութեամբ, զեղք և կանգնեց օտարի ծայրերի վրա, որպէս զի կարողանայ համեմատ իր ամուսնուն:

Աւելորդ էր նրանից ներգրգոթիւն խնդրել. նա առաջվան պէս ջնջւմ սիրով էր սիրում Արտուրին:

դէմ հանել, վերջապէս յաջողեցաւ խղել և քոպական ներդաշնակութիւնն, շահելով Գերմանիան և հետեւեղ Աւստրիան: Այս երկու պետութեանց յենլով, Բ. Կրանը համարձակեցաւ մերժել Անգլիոյ և ուրիշ պետութեանց տուած խորհուրդներն 61-րդ յօդուածի գործադրութեան նկատմամբ: Ստույգ է թէ Գերմանիա և Աւստրիա չը հակառակեցան բարենորոգմանց, այլ չէլզը դիմը մը բռնեցին, սակայն այդքան հոգի պետութեանց չէրգրութիւնն իսկ բաւական է չէրգրացնելու համար լրտ Տերթրերին ձանքերն: Գերմանիա իւր սովորական անձնատիրութեամբ վարուեցաւ ներկայ խնդրին մէջ, և Ռուսիոյ դէմ ունենալիւր պատերազմի մ'ատեն հաճկատանի աջակցութիւնը վայելելու նպատակին դո՛նեց իւր մայրաքաղաքին մէջ հանդիսաւոր կերպով հաստատուած դաշնագրի մը մէջ կարեւոր տրամադրութիւնն: Գերմանիոյ ընթացքն է այժմ յղել թիւրք կառավարութիւնն և չը խօսել ու է խնդրի վրայ որ անհաճոյ է անուր. նա լուսն կը մնայ ոչ միայն 61-րդ յօդուածին նկատմամբ, այլ մինչև իսկ իւր հպատակաց թիւրք կառավարութեան դէմ ունեցած առեւտրական դատերուն ներկատմամբ: Արդարեւ, գերմանացի վաճառականք հրաման ստացած են իրենց դեսպանատունէն որ մեղմացնեն իրենց պահանջումներն Օսմանեանց դէմ և Բ. Կրան անախորժ եղող դատերէ ետ կենան առ այժմ: Ուրեմն վարմանալի չէ որ անգլոֆոն Պիսմարկ դո՛նէ հայ ժողովուրդին, քանի որ յօժաւակամ կը դո՛նէ իւր գերմանացի ազգակիցներ:

Բարեբաղդաբար կամ դժբաղդաբար, հաճկատանի մէջ ոչինչ մնացուն է և սէր և առեւտրութիւն իրարու կը յաջորդեն իսկոյն: Այսպէս պիտի լինի նաև Գերմանիոյ նկատմամբ, որոյ նորաձեռութիւնն անցնելու վրայ է բոս ունանց, զի թիւրքերն վշտացած են տեսնելով թէ նա իրենց յուսացածին չափ չօգնել իրենց՝ Նեղիկափոսի և Թուրքիոյ մէջ: Անգլիա սկսած է օգուտ քաղել այս երկայնիկ և ձայն բարձրացունել 61-րդ յօդուածին համար, որոյ կարգադրութիւնը անցնալ մարտ ամսոյ թողուած էր Բ. Կրան կողմէ: Եւ Տերթրերին ասիկ երկու շարաթ յառաջ ուղղակի սուլթանին ծանօթագիր մը յղեց, յիշեցնելով թէ մարտ ամսին անցնելու վրայ է և թէ եւրոպա անհամբեր կը սպասէ որ խոստացուած բարենորոգումներ կարգադրուին. կասեն թէ Ռուսիոյ, Ֆրանսիայի և Իտալիոյ դեսպանք համաժող էին Անգլիոյ դեսպանին: Վհ. Սուլթանը, որ համակիր չէ հայկական խնդրին, իւր քարտուղարներէն Միւնիխ Պէլի միջոցաւ լրտ Տերթրերին գործուց յիշեալ ծանօթագիրն, առաքելով թէ դեսպանն պարտաւոր էր յղել զայն Բ. Կրան և ոչ կայսերական պալատն, իբր թէ ինք չը լինէր բացարձակ վիճակաւ և ունենար պատասխանատու նախարարներ: Եւ Տերթրերին նկատեց սուլթանի վարմունքն իբր պատրուակ իւր ծանօթագիրը մերժելու, ուստի, դատաւարով Միւնիխ Պէլին, ասեց. «Ես վհ. սուլթանին յղեցի ծանօթագիրս, զի Բ.

Մօր ու որդու մէջ սարսափելի փոփոխի բարձրացաւ: Արտուրը մեղադրում էր նրան ստախոսութեան և զրգարութիւնների մէջ ու աստիճան յանդիմանութիւնների թափեց նրա վրա, որին և արժանի էր: Նա այն աստիճան զայրացած էր, որ էլ չէր հասկանում, որ իր հետ մայրն է խօսում, չէր խնայում և չէր մեղմացնում իր կծու խօսքերը: Իսկ մայրը ստախոս կատաղած, մոռանալով ամեն տեսակ համարումն, մոռանալով յարկ դէպի իր անձը և սէր դէպի որդին, պատասխանում էր նրան ծաղրելով, հայհոյանքներով և վիրաւորական խօսքերով: Արտուրը չը կարողացաւ իրան դադել: Վերջի վերջոյ միտրիս Ամֆլէտը յայտնեց, որ այլ ևս չէ կարող մնալ նոյն իսկ տան մէջ, ուր բնակվում է նրա ամուսինը: Նրանք պէտք է հեռանան Տօրնիվէլը:

Գժաղադարար այդ բոլորէն Ջերալդինան մտաւ հիւրասննակից, որի դուռը ամբողջ խօսակցութեան միջոցին բաց էր մնացել:

— Ես այս տանից, միտրիս Ամֆլէտ, հեռացող չեմ, բարկութեամբ բացականչեց նա: Տօրնիվէլը — մայրստ է և օրէնքով պատկանում է ամուսնուն: Հետեւեղս ես աշտուղ իսկական տանտէրն եմ, իսկ դուք—իմ հիւրը, և ոչ ընդհակառակն:

— Ջերալդինա, Ջերալդինա, փորձում էր կաղնեցնել նրան Արտուրը:

— Լիւր, այդ քո դուռը չէ, ասեց նա հրամայող ձայնով, ի հարկէ դու չես կարող պահել իմ կողմը մը և գնալ մօրդ դէմ: Եւ աւելորդ էլ է: Ես ինքս կը կարողանամ ինձ պաշտպանել:

— Դուք սխալվում էք, մայրիկս, պատասխանե՛լ
Արտուրը, մի՛ջ մոռանալ, որ ես ասածս միշտ
կատարում եմ: Հասկացե՛ք, խնդրեմ, որ եթէ դուք

առանց լեզուի ու չարթողութեան: Դա անդամա-
լուծացաւ: Երբ նրան ուշքի բերին, նա ճանաչեց
Ջէրարդինային ու Արտուրին, որոնք խոր իղճա-
հարութեամբ խնամք էին տանում նրա վրա: Դա

Ջերալդինա արդեն փորձված լինելով, այլ և ոչ մի անգամ առիթ չը տուեց ոչ ամուսնուն և ոչ սկեսորին կասկածելու իր հաստատ կամքի և բնասիրտի հան մեջ: Կա նոյնպես ուրախ, իր նամուշ, առաջին և բարի էր գնալու ամենը, ինչ պէ՛տ է առաջ, բայց այժմ՝ ոչ ասն որիկին էր և նախորդ գգում էին այդ ու յարգում էին նրա

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵ

Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախկին խԱՆՊԵԱՆ ուսումնարանի աշակերտները պատիւ ունեն խնդրելու, ԳԱՐԻԲԵՐԴԻԱՆՈՍ ԱՅՎԱԶՆԻ յիշատակը յարգողներին, չնորձ բերել կերակրի, ապրիլի 25-ին, առաւօտեան 11 ժամին, Վանքի մայր եկեղեցին, ուր կատարվելու է նորա հոգեհանգիստը:

1—3

ԲԱՆԶԱՍ

«Բ Ա Ր Մ Ա Ն Ի»

Արտաքին գործառնական համար խՕԼԵՐԻՆԱՅԻ, ՈՍԿԱՐԱՅԱԻ, ԱՏԱՄՆԱՅԱԻ Ի ԴԵՄ և այլն, ներքին գործերի մինիստրութեան ԲՅՇԿԱԿԱՆ խորհուրդից թոյլատուած: Գլխավոր պահեստը ամբողջ կողմանի համար:

ԳԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏԻԻ ԿՈՎԿԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ առաջ պատկանում էր Ա. ԾՈՒՐԻՆՈՎԻՆ և ընկ., Թիֆլիսում:

1—10 (Ե. Հ. Զ.)

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Մեր տպարանից, հետեւեալ մեր թարգմանութիւնը

«ՎԻՐԱՒՐՈՒԱԾ ՍԿԻՒՌ»

Փոքրիկ պատմութիւն երեխայից համար: Ամենափոքրիկ զերբոյ և մաքուր տպագրութիւն:

Տպած է Մանուշակի դռնով:

Գինն է 10 Կ. 10 օր. պակաս չէ ուղարկում:

Հասցեն՝ Вѣ Эривань

А. С. Гуламирянцъ. 2—5

1,000

Հատ երկաթեայ ԱՆԿՈՂԻՆՆԵՐ նոր են ստացվել և ծախվում են 10 րուբլուց մինչև 25 րուբլ հատը և նոյնպէս զոյգերի համար անկողիններ 20 րուբլուց ըսկած:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Նոյնտեղ ՎԱՃԱՌՈՒՄՆ պանրի, մուրաբայի, կոնֆէկաների, զգեստների, վերարկուների, կրաքների և 500 բեզովերների:

3—6

Ապրիլի 15-ից Կենտրոնական գրադարանում, որ գտնվում է Արծրունու գաղլերէի № 149 և 150 բացված է հայերէն գրքերի բաժանումը: Ամսական վճարը մի գրքի համար 30 Կ., երկու գրքի համար 50 Կ., իսկ երեք գրքի համար 80 Կ.:

Գրած պէտք է թողնեն 2, 3 կամ 5 րուբլ. նայած քանի գրքը է ստանում: Գրադարանը բաց է ամեն օր առաւօտեան 8 Ժ. մինչև երեկոյեան 8 ժամը:

3—10

ՎԻԷՆԱՅԻ ԱԹՈՒՆԵՐ

36 ԲՈՒՐԼ

ԵՓ. Ծառուբեանցի դէպքում

17—20

ԵՆՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արծրունու գաղլերէում, № 144 ԵՄԱԿՈՒՄ Է արժան գնելով ՎԻԷՆԱՅԻ

Տոնէտ ֆարքիկայի ամեն տեսակ ՄԵՐՈՒՄ, նոյնպէս խաղիկայի ՄԱՐՄԱՐՈՒՄ, քարկը:

ՀԱՅԵՐԵՆԵՐ Լ ՇԻՃԱՆԱԿՆԵՐԸ:

25—60

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

Յանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ, ԱՆԳԼԻԵՐԻՆ և ՖՐԱՆՍԵՐԻՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական աւարկաներից:

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին դիմել «ՄՇԱԿ» խմբագրութեանը:

7—10

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . . 8 roubles

6 mois. . . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Апрель 1882 года.

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆԱՅԻ ՄԵՐԵՆ ամենայն տեսակ, ֆրանսիական երկաթէ կՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամարաններ 250—25 ր., սակվոյթներ 1. 30—12 ր., սոսնդ ու կնէր ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребы) 6—25 ր., սաւմօ վարներ 60 Կ.—1.25 ֆունտը, կուլածոնի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ոււմի վալի կնէր մրաւօրնի 38 ր.—75 ր., հրացանների երկու լուսնի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (զուլաններ) ընկողներ, սիգար Բէնգարդի ֆարքիկից. պապիւրա և թամբալու կուշնարովի գրկի պապիւրով. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) ԵՄԵՆԻ, կոֆէ ԵՄԵՆԻ և ՄԻՆԵՆԻ. Պետերբուրգու 40—1 ր. 25 Կ. հայելներ ամենայն տեսակ 28 Կ.—240 ր., պրոբկայ գինէլաճանների, հանքային և գարիջի (ДЛЯ ЗЕЛТЕРСКИХЪ ВОДЪ И ПИВА) զուլթուկ (пучек), պապիւրների սամվարի և չայու, դանակ չանդալ գանազան ֆարքիկաների 1 ր. 20 Կ.—25 ր. դուժինը. զրչակովներ 1 ր. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջրի 1—60 Կ.—12 ր., դանակ հացի 20 Կ.—1 ր., հատը, կուլանի 1—40 մինչև 3—20 Կ. պրիբոր. միս կտրելու մաշկայ. Անգլիական ուլթաներ, բրիտանիկ չայիկներ, կաֆէի նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամայ կարթիկէն 18 Կ., վաքս ֆրանսիայի ձաղոյ, թուղթ փոշոյի, կանգնեղաններ, սուրճուչ, մատիտ, զրիչ երկաթէ, զրչակով, քարտատուակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիկներ, զոլաներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկ դուժինը 1—50 Կ. մինչև 12 ր., և չայու 45 Կ.—5 ր., չուլմիչէ 45 Կ.—5 ր., շամպաններ ամեն տեսակ 25 Կ.—12 ր. ջուլտա, պղստապոչկաններ վարչակու, ԲԵՅՈՒՆ ԿԱՌՈՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլթաններ կանանց և մարդկերանց 15 Կ.—50 Կ. ջուլտա, շապիկներ, մարդկերանց դալուստիկներ, գանդիկներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրիկ և շոքի. սանդղիկ շիրմայու ոսկորէ, դուստպրիզովի և փայտէ, չոսկաներ գլխի, շոքի, սապիկ, պոյի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատիկ կոճի և շալէ (гарусъ) ֆէլչատիկէ մարդկերանց և կանանց, պորամաններ, քիտաներ, պատիւրոսի ամաններ և մանր գոլանտերիկի տպրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտալիտ ջրի, պուրա, Կլեյերին ջրի քացալ, հոտալիտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և գիծումով վերցիլեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԷՆԱՅԻ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՆԵՐ պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաբաղադրացի կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисъ Михайлу Н. Теръ-Никогосову.

35—180

Մ Ի Ջ Ի փ ո ղ ո յ, Կ ա թ ո լ ի չ է ս կ ա յ ա փ ո ղ ո յ ի ա ն կ ի լ ը Ն 13.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵՐԻ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 Կ. դիւմիք, ԾՐԱՐՆԵՐ 3 Կ. հարկը, սապոն 3 Կ. հատը, արեի ժԱՄՆՈՅՆԵՐ 50 Կ., ԵՂՈՒՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 Կ., կրաններ 10 Կ., ջրի ամաններ 30 Կ., կիւր 25 Կ., կախարաններ 4 Կ., ՖԱՏՐԱՆԵՐ 3 ր., ծրծիներ 1 ր., հայելներ 35 Կ., վարիչներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՐԲՈՂՋ ՀԱՊՈՒՍ 13 ր., գլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., չչօտկա 90 Կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 Կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒՐԱՆԵՐ 2 ր. 50 Կ. դիւմիք, ՄԵՂԱՄՈՒՄ 32 Կ. անգլիական ֆունտը, կանֆեաներ 40 Կ. ֆունտը, ԳԻՊ, արիկ, ԱԼՔՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԼԵՐԻՑ:

20—50

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի ԲԱՅՅԻ

Գ Ա Ի Ի Թ Բ Ե Կ Ի

III ԳԻՐԲԸ

Բաղկացած է 563 երեսներից

Գինն է 2 ԲՈՒՐԼ

Վէպի այս հատորի մեղաւաճումը թիւը պատկանում է բացառապէս Թիֆլիսի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐՆԵՐ: Օտարաբաղադրացի կարող են դիմել այս հասցեով.

«ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ» (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

5—10

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱՐԻԿԱՅՈՒՄ լու ծԽԱՌՈՏԻ սիրողները և գործառնողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱՌՈՏ ԵՒ ՊԱՊՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի: Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծրխախոտը կարող է բաւականացնել ամենաբնոր ծաշակին: Ծխախոտի գինը, ֆունտը 3 րուբլուց մինչև 10 րուբլ, իսկ պապիւրոսների 100 հատը սկսած 1 րուբլուց, մինչև 3 րուբլ:

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գաղլերէում, Կվորցովի փողոցի վրա, № 3.

Պարզեմ եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆարքիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում:

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

25—25

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ:

Մանրաման ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ոււււ և իւււ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, իւււ առարկաներից, ուրբան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել «Մշակ» խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցեն:

10—15

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.